ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ГЮМРИЙСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ПЕДАГОГИЧЕСКИЙ ИНСТИТУТ ИМ. М. НАЛБАНДЯНА
GYUMRI STATE PEDAGOGICAL INSTITUTE AFTER M. NALBANDYAN
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ SCIENTIFIC PROCEEDINGS

Պրակ Ա
Выпуск А
Issue A

2015 № 1

ՀՏԴ 581.92 ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Կ. Մարտիրոսյան, Ա. Ս. Խաչատրյան,
Է. Ռ. Սուվարյան, Ա. Ֆ. Գրիգորյան

ՉԻՉԽԱՆ ԳԵՏԻ ՎԵՐԻՆ ՀՈՍԱՆՔԻ ՖԼՈՐԱՆ

Բանալի բառեր՝ Չիչխան գետ, բույսերի բազմազանություն, ՀՀ Կարմիր գիրք, բնական լանդշաֆտներ, ռեկրեացիոն ռեսուրս:

Ключевые слова: Река Чичхан, разнообразие растений, Красная книга РА, естественные ландшафты, рекреационные ресурсы.

Keywords: The River Chichkhan, plant diversity, the Red Book of RA, natural landscapes, recreational resources.

Չիչխան գետի վերին հոսանքի շրջակա տարածքում ուսումնասիրվել և նկարագրվել են 31 ընտանիքներին պատկանող 135 բուսատեսակներ, որոնց թվում՝ ռելիկտային ծագում ունեցող կաղամախու բնական անտառը: Տարածքում հանդիպող շատ բուսատեսակներ ժողովրդական բժշկության մեջ օգտագործվող դեղաբույսեր են:

Հայտնաբերվել և նկարագրվել են նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված 7 բուսատեսակներ:

Հետազոտվել է 1977 թվականի գարնանը տնկված սոճի սովորականի արհեստական անտառը:

Նախաբան. Հարուստ ու ինքնատիպ է Հայաստանի բուսական աշխարհը, սակայն շատ տարածքներ դեռ լիարժեք չեն ուսումնասիրվել: Մեր հետազոտությունը վերաբերում է այդ տարածքներից մեկին, որի ֆլորան ուսումնասիրվում է առաջին անգամ:

Որպես հետազոտման նյութ՝ ընտրվել է Չիչխան գետի վերին հոսանքի շրջակա տարածքի ալպյան և մերձալպյան գոտիների բուսական աշխարհը: Հիմնականում ուսումնասիրվել է ծաղկավոր բույսերի բազմազանությունը, ընդ

որում առանձնակի ուշադրություն է դարձվել վտանգված և ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերմանն ու նկարագրմանը:

Նման հետազոտությունների արդիականությունը պայմանավորված է նաև տնտեսության տարբեր ճյուղերի և մասնավորապես զբոսաշրջության (էկոտուրիզմի) զարգացման պետական ծրագրերով:

Նյութը և մեթոդը. Հետազոտական աշխատանքի ժամանակ օգտագործվել է գիտական գույքագրման մեթոդը: Այս մեթոդի օգնությամբ ուսումնասիրվել են Չիչխանի հովտում աճող բուսատեսակների բազմազանությունը և դրանց բաշխվածությունը տարբեր կարգաբանական խմբերի միջև: Հավաքվել են բուսատեսակներ, պատրաստվել հերբարիումներ: Բուսատեսակները որոշվել են՝ օգտագործելով գիտական գրականություն[1]: Բույսերի հայերեն և լատիներեն անվանումները բերվում են ըստ Ռ. Ի. Ղազարյանի, 1981[2]:

Ուսումնասիրված տարածքը գտնվում է ծովի մակարդակից մոտավորապես 2500 մետր բարձրության վրա՝ ալպյան և մերձալպյան գոտում: Այն ասիմետրիկ կառուցվածք ունեցող խորը գետահովիտ է: Հովտի աջափնյա հատվածն իրենից ներկայացնում է հյուսիսարևելյան դիրքադրության զգալի թեքության (15-20^0), տեղ-տեղ զառիթափ լանջեր, որի հետևանքով դրանք բավական խոնավ են և լավ բուսապատված: Աջափնյա լանջերին տեղ-տեղ պահպանվել են բարդի դողդոջունի կամ կաղամախու (Populus tremula) ոչ մեծ ֆորմացիաներ, որոնք, մեր կարծիքով, դիզունկցված արեալի մնացորդներ են: Կարելի է ենթադրել, որ դիզունկցման պատճառներն ունեն անտրոպոգեն բնույթ: Նախկինում գոյություն ունեցած ֆորմացիաների մասին հստակ տեղեկություններ չունենք: Ենթադրվում է, որ կաղամախու անտառները մինչև 18-րդ դարը զբաղեցրել են Շիրակի լեռնաշղթայի գրեթե ամբողջ հյուսիսային լանջը՝ Ախուրյանի կիրճից մինչև Չիչխանի գետաբերանը: Այս տեսակետի օգտին են վկայում ինչպես լեռնալանջերին պահպանված հետանտառային հողերը, այնպես էլ որոշ տեղանունների վերլուծությունը [4]:

Ի տարբերություն գետահովտի աջափնյա լանջի՝ ձախափնյա լանջն ավելի մեղմաթեք է և ունի հարավարևմտյան դիրքադրություն, որի պատճառով այն ավելի չոր է, թույլ մասնատված: Այստեղ տիրապետող են քսերոթերմալ ֆորմացիաները, որոնց մեջ պահպանվել են նաև հազվագյուտ բուսատեսակներ:

Դաշտային ուսումնասիրությունների համար մեր կողմից իրականացվել է երթուղային հանույթ: Առաջին երթուղու ընդհանուր երկարությունը կազմել է 7կմ: Այն ընդգրկում է Բաշգյուղ-Գետիկի ջրամբար հատվածը: GPSMAP 76 (versatile navigaton) սարքի օգնությամբ 1:50000 մասշտաբի քարտեզի հիմքի վրա

տեղադրվել են երթուղում գտնվող հազվագյուտ և Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների տեղերը, որի արդյունքում կազմվել է երկրաբուսական խոշորամասշտաբ քարտեզ: Նույն մեթոդով իրականացվել է հանույթ ևս 3 երթուղիներով՝ (Կաքավագյուղ - Զորաշեն – Թռչկան ջրվեժ (5կմ), Թռչկան ջրվեժ – Թռչկան գետակի վերին հոսանք (5կմ), Թռչկան ջրվեժ – Շիրակամուտ (8կմ)):

Հետազոտության արդյունքները. Հետազոտությունների արդյունքում ուսումնասիրված տարածքում նկարագրվել են 31 ընտանիքներին պատկանող շուրջ 135 բուսատեսակ: Բուսատեսակների նման մեծ բազմազանությունը բնորոշ է ալպյան և մերձալպյան գոտիներին: Ֆլորայի նման բազմազանությունը պայմանավորված է Հայաստանի յուրահատուկ աշխարհագրական դիրքով, կլիմայական, երկրաբանական գործոններով:

Աղյուսակ 1-ում ներկայացված է Չիչխան գետի վերին հոսանքում գտնվող Սարապատ համայնքի և նրա շրջակա տարածքի բուսական աշխարհի ներկայացուցիչների բաշխվածությունն ըստ ընտանիքների:

Աղյուսակ 1.

Չիչխան գետի վերին հոսանքի տարածքում հանդիպող բույսերի ընտանիքները և դրանց տեսակների թվաքանակը

№	*Ընտանիքների անվանումը հայերեն*	*Ընտանիքների անվանումը լատիներեն*	*Տեսակների թվաքանակ*
1.	Ակքանազգիներ	Dipsacaceae	2
2.	Այծատերևազգիներ (Ցախակեռասազգիներ)	Caprifoliaceae	5
3.	Անփառուկազգիներ	Adoxaceae	1
4.	Բակլազգիներ (թիթեռնածաղկավորներ)	Fabaceae (Papilionaceae)	12
5.	Բարդածաղկավորներ (աստղածաղկազգիների)	Compositae (Asteraceae)	22
6.	Գաղտրիկազգիներ	Boraginaceae	3
7.	Գնարբուկազգիներ	Primulaceae	2
8.	Գորտնուկազգիներ	Ranunculaceae	2
9.	Դաշտավլուկազգիներ (հացազգիներ)	Poaceae (Gramineae)	12
10.	Եղինջազգիներ	Urticaceae	2
11.	Զանգակազգիներ	Campanulaceae	4
12.	Թելուկազգիներ	Chenopodiaceae	10
13.	Խաչածաղկավորներ (կաղամբազգիներ)	Cruciferae (Brassicaceae)	3
14.	Խլածաղկազգիներ	Scrophulariaceae	1
15.	Խոլորձազգիներ	Orchidaceae	2
16.	Խուլեղինջազգիներ (շրթնածաղկավորներ)	Lamiaceae (Labiatae)	8
17.	Կակաչազգիներ	Papaveraceae	4
18.	Ծնեբեկազգիներ	Asparagaceae	1
19.	Հաճարազգիներ	Fagaceae	3

20.	Հիրիկազգիներ	Iridaceae	3
21.	Հնդկացորենազգիներ	Polygonaceae	4
22.	Հովանոցազգիներ	Umbelliferae	3
23.	Մեխակազգիներ	Caryophyllaceae	6
24.	Մորմազգիներ	Solanaceae	3
25.	Շուշանազգիներ	Liliaceae	4
26.	Ջղախոտազգիներ	Plantaginaceae	2
27.	Սոճազգիներ	Pinaceae	1
28.	Սրոհունդազգիներ	Hypericaceae	1
29.	Վարդազգիներ	Rosaceae	8
30.	Տորոնազգիներ	Rubiaceae	1
31.	Ուռազգիներ	Salicaceae	1
	Ընդամենը		*135*

Առավել հաճախ հանդիպող տեսակների քանակական բաշխվածությունն ըստ ընտանիքների պատկերված է սխեմա 1-ում:



Սխեմա 1. Առավել հաճախ հանդիպող ընտանիքները և դրանց տեսակների քանակը

Տարածքը, որն էկոլոգիապես բավական մաքուր է (չկան օդն աղտոտող տարբեր գազային արտանետումներ, կուտակված աղբակույտեր, ծանր մետաղների կամ քիմիական նյութերի թափոններ), հարուստ է դեղաբույսերով, որոնք օգտագործվում են ժողովրդական բժշկության մեջ: Դրանցից են հնգաբլթանի առյուծագին (Leonorus cardiaca L.), դառը օշինդրը (Artemisia absinthium L.), սողացող ուրցը (Thymus serpyllum L.), ծակոտկեն արևքուրիկը (Hypericum perforatum L.), մեծ, նշտարատերև, փոքր եզան լեզուները (Plantago major L., Plantago lanceolata L., Plantago minor L.), ավազային անթառամը (Helichrysum pintocalix D. Sons.),

հոտավետ երիցուկը (Matricaria discoideae DC.), բարձր խոնդատը (Verbascum thapsiforme Schrap.), ալպիական զիվանը (Cephalaria alpina L.) և այլն:

Տարածքում հայտնաբերվել են նաև ՀՀ-ի Կարմիր գրքում գրանցված 7 բուսատեսակներ [3]: Վերջիններիս վեգետացիան սկսվում է մարտ-ապրիլ ամիսներին, երբ դեռ չի սկսվել կենդանիների արածեցումը: Սա հնարավորություն է տալիս այդ բույսերին ավարտելու փոշոտումը և ապահովելու նորմալ աճ: Հարկ է նշել, որ Կարմիր գրքում գրանցված այդ 7 տեսակների մեծամասնությունն աճում է ժայռային, քարքարոտ տարածքներում, որտեղ կենդանիները հիմնականում չեն արածում: Մեր կարծիքով, բուսական աշխարհի բազմազանության պահպանմանը նպաստում է նաև նշված տարածքում ցանքատարածությունների կրճատումը:

ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների անվանումները և կատեգորիաները բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Չիչխան գետի վերին հոսանքի տարածքում հանդիպող, ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները

№	*Հայերեն անվանումը*	*Լատիներեն անվանումը*	*Ռուսերեն անվանումը*	*ՀՀ Կարմիր գրքում գրանցման կատեգորիան*
1.	Գազ չոված	Astragalus divaricatus Bunge.	Астрагал растопыренный	Վտանգված տեսակ
2.	Թրաշուշան հայաստանյան	Gladiolus hajastanicus Gabrielian	Шпажник армянский	Վտանգված տեսակ
3.	Խլոպուզ Գրոյտերի	Merendera greuteri Gabrielian	Мерендера Грейтера	Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ
4.	Հիրիկ ատրպատական	Iris atropatana Grossh.	Касатик атропатанский	Վտանգված տեսակ
5.	Հիրիկ Դմիտրիի	Iris demetrii Achv.& Mirzoeva	Касатик Дмитрия	Վտանգման սպառնացող վիճակին մոտ տեսակ
6.	Ոզնագլխիկ Տուրնեֆորի	Echinops turnefortii Trautv.	Мородовник Турнефора	Վտանգված տեսակ
7.	Վարդակակաչ Ֆլորենսկու	Tulipa Florentski Woronow	Тюльпан Флоренского	Վտանգված տեսակ

Ուսումնասիրված տարածքում փոքրիկ պատառիկներով պահպանված է Շիրակի մարզում կաղամախու միակ բնական անտառը, որը եզակի է ամբողջ Հայկական լեռնաշխարհում: Կաղամախու այդ անտառը գոյություն է ունեցել

դեռևս մինչև չորրորդականի սառցապատումը [4]: Անտառը տարածվում է Թրոչկան ջրվեժի և Չիչխան գետի ափերին: Անտառի պատառիկներ կան հարակից Զորաշեն, Սարապատ, Բաշգյուղ գյուղերի շրջակայքում՝ լեռների հյուսիսային լանջերին: Անտառում հանդիպող թփերից են՝ սովորական գերիմաստին (Viburnum lantata L.), շնավարդը (Roza canina L.) ամբողջաեզր չմենին (Cotoneaster integerrinus Medik.), սովորական մոռենին (Rubus idaeus L.) և այլն: Վերջիններիս գերակշիռ մասն անտառի եզրերին է:

Այս անտառների որոշ մասը գտնվում է բնակելի տարածքներից բավականին հեռու, ինչը թույլ է տալիս քիչ թե շատ նորմալ աճ ապահովել: Անտառներն ունեն ռելիկտային բնույթ:

Մեր ուսումնասիրությունների ընթացքում հետազոտվել է նաև 1977 թվականի գարնանը տնկված սոճի սովորականի (Pinus sylvestris L.) արհեստական անտառը: Սոճու անտառը գտնվում է Չիչխան գետի աջ ափին՝ Սալուտ, Բաշգյուղ, Փոքր Սարիար, Կաքավասար, Սարապատ և Զորաշեն գյուղերի մոտակա տարածքներում: Ինչպես գետի, այնպես էլ անտառի հարակից շրջակայքը բավականին հարուստ է բուսական աշխարհով: Սովորական սոճու անտառի վերին եզրին հանդիպում են սովորական մոռենու, կարմիր հաղարջենու (Ribes rubrum L.), ամբողջաեզր չմենու, շնավարդի, սովորական գերիմաստու թփուտներ, սովորական արոսենու (Sorbus aucuparia L.) և ամառային կաղնու (Quercus robur L.) փոքրաթիվ ծառեր: Որոշ հատվածներում արհեստական սոճուտներին ուղեկցում են կաղամախու փոքրիկ կղզյակներ: Տարածքում հանդիպում են նաև արհեստական աճեցված ուռազգիների (Salicaceae) ծառուտներ, որոնք տարածվում են գետափին: Հանդիպում են ուռենի կոտրտվողը (Salix fragilis L.), այծուռին (Salix caprea L.) և այլն:

Այս ծառաթփատեսակները հասցնում են ամառվա ընթացքում ավարտել իրենց վեգետացիան: Հանդիպում են մոտավորապես ծ.մ. 2300-2500մ բարձրության վրա: Պետք է նշենք, որ դիտվում է և՛ սոճու, և՛ կաղնու, և՛ արոսենու համեմատաբար դանդաղ տարեկան աճ: Պայմանները նպաստավոր են մատղաշ ծառերի թվաքանակի ավելացման համար, քանի որ այդ տարածքներում անասունների արածեցումն աննշան է, ինչը և թույլ է տալիս մատղաշ ծառերին անվնաս աճել:

Պետք է նշենք, որ ըստ ամենայնի անտառի աճն ապահովելուն մեծապես նպաստում է նաև տարածքի անտառտնտեսության կողմից անտառահատումների խիստ վերահսկումը:

Անտառի խոտածածկույթը հիմնականում ներկայացված է բակլազգիներով, դաշտավլուկազգիներով, թելուկազգիներով, մամռանմաններով և այլն: Անտառի հարակից տարածքում հանդիպում է բարդածաղկավորների, շուշանազգիների, հովանոցածաղկազգիների, մեխակազգիների, վարդազգիների և այլ ընտանիքների մեծ բազմազանություն:

Եզրակացություն. Կատարված դաշտային ուսումնասիրությունների արդյունքների, ինչպես նաև գրականության վերլուծության հիման վրա կարելի է պնդել, որ Չիչխան գետի հովիտն աչքի է ընկնում մեծ կենսաբազմազանությամբ:

Գետահովտի բնական լանդշաֆտները կարելի է բաժանել երկու խմբի. համեմատաբար խոնավ (գետահովտի ձախ լանջեր) և չորային (գետահովտի աջ լանջեր): Ընդհանուր առմամբ բնական բուսածածկույթը պահպանվել է լավ, միայն համեմատաբար ցածրադիր և թույլ թեքության տեղամասերում, այն էապես փոփոխված է կամ վերափոխված գյուղատնտեսական հանդակների:

Կենսաբազմազանության նման բարձր ցուցանիշը հնարավորություն է ընձեռում Չիչխանի միջին հոսանքում էկոզբոսաշրջության զարգացման համար:

Առաջարկություն. Քանի որ հետազոտված տարածքի յուրահատուկ միկրոկլիմայական պայմանների պատճառով Չիչխանի հովիտն էապես տարբերվում է Աշոցքի տարածաշրջանի մնացած տեղամասերից, ուստի անհրաժեշտ է կատարել լրացուցիչ բուսաշխարհագրական հետազոտություններ, որը լավ նախապայման կլինի ռեկրեացիոն ռեսուրսների զարգացման համար: Նմանատիպ հետազոտություններից հետո տարածքը կարելի է նաև վերածել արգելավայրի՝ լուծելով լոկալ բնապահպանական խնդիր:

А. К. Мартиросян, А. С. Хачатрян, Э. Р. Суварян, А. Ф. Григорян

Флора верховья реки Чичхан

Изучены и описаны 135 видов растений из 31-го семейств, произрастающие на прилежащих территориях верхнего течения реки Чичхан, в том числе естественный лес осины, имеющий реликтовое происхождение. Многие виды растений, встречающиеся на территории – лекарственные растения, используемые в народной медицине.

На территории обнаружены и описаны 7 видов растений зарегистрированных в Красной книге РА.

Исследовался также искусственный лес сосны обыкновенной, посаженный весной 1977 года.

A. K. Martirosyan, A. S. Khachatryan, E. R. Suvaryan, A. F. Grigoryan

Flora of the Upper-Flow of the River Chichkhan

135 species belonging to 31 families have been studied and described in the surrounding area of the upstream of the River Chichkhan among of them the origin aspen forest of the relict nature. Many plants in the territory are herbs used in the folk medicine.

7 plants registered in the Red Book of RA have also been identified and described.

The usual artificial pine forest planted in the spring of 1977 has been investigated.

Գրականություն

1. Флора Армении. 1-7 тт., Ер.: Изд-во. АН Арм. ССР. 1954-1980.
2. Ղազարյան Ռ.Ս. Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն բառարան – Եր., ԵՊՀ հրատ., 1981, 180 էջ:
3. ՀՀ բույսերի Կարմիր գիրք: Եր.: «Զանգակ» հրատ., 2010: 592 էջ:
4. Մարտիրոսյան Լ. «Գորշաբերդ» արգելավայրի կենսաբազմազանությունը և դրա պահպանության մի քանի հարցերի մասին // ԳՊՄԻ Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր: Գյումրի: “Էլդորադո” հրատ., 2012: էջ 148-152:

Տեղեկություններ հեղինակների մասին,

Ասյա Կառլենի Մարտիրոսյան *- կենս. մագիստրոս, Հորաշենի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի, E-mail: asya.martirosyan15@mail.ru*

Անուշ Ստեպանի Խաչատրյան *- կենս. գիտ. թեկն., դոցենտ, ԳՊՄԻ Կենսաբանության, էկոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի ասիստենտ, E-mail: anush.s.khachatryan@gmail.com*

Էմմա Ռաֆիկի Սուվարյան *- ԳՊՄԻ Կենսաբանության, էկոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն*

Անգին Ֆելիքսի Գրիգորյան *- կենս. գիտ. թեկն., դոցենտ, ԳՊՄԻ Կենսաբանության, էկոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն, E-mail: angingrigoryan@mail.ru*

Տրվել է խմբագրություն 17. 03. 2015